Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարությունում զբաղեցված բանվորների հիմնական քանակությունը ներգրավված է Երևան քաղաքից և մոտակա բնակավայրերից, ուստի բանվորները և այլ աշխատողները հերթափոխից հետո գնալու են իրենց բնակատեղի, և ունենք շինարարական հրապարակի շատ սահմանափակ տարածք, որտեղ հնարավոր չէ տեղակայել ցնցուղարան և ճաշարան վերոնշյալ հաշվարկից կարելի է բացառել համապատասխան ծախսերը:

Բերված ժամանակավոր ջրամատակարարման ջրի ծախսը ենթակա է ճշտման շինարարության ընթացքում:

1.8 Հիմնական մեքենաները և մեխանիզմները

Շինարարական մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվությամբ և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանը կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

<u>Հիմնական մեքենաների և մեխանիզմների նվազագույն քանակություն</u>

դդ Հ/Հ	Մեքենաների ¨ մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը ¨ տիպը	Քանակ, հատ
1	**2**	**3**	**4**
1	Ավտոինքնաթափ	12-16տ բեռնունակ.	4
2	Կցորդիչ- հեծանատեղափոխիչներ /тралы/	40տ բեռնունակ.	1
3	Ավտոամբարձիչ	բեռնատվ. 40տ	2
4	Ավտոբետոնախառնիչ	Տարողությունը 2մ3	1

5	Ավտոբետոնապոմպ	10մ3/ժամ արտադրողակ անությամբ	1
6	Կոմպրեսոր	արտադ-յունը 10մ^3/րոպե	1
7	Հետահար մուրճ	ՄՕ-10	1
8	Բուլդոզեր	59կՎտ	1
9	Էքսնավատոր	0.65մ3 շերեփի տարողութ-յամբ	1
10	Ինքնագնած գլղոն	Առնվազն 6տ	1
11	Կցորդիչ գլղոն	25տ	1
12	Ձեռքի տոփիչ	40կգ	2
13	Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ	-	1
14	Զոդման ապարատ պողպատի համար		2
15	Զոդման ապարատ պոլիէթիլենի համար		2
16	Խորքային վիբրատոր	Իվ	2
17	Մակերևույթային վիբրատոր		1

Պահանջվող մակնիշի բետոնի պատրաստումը առաջարկվում է կատարել մոտակա կենտրոնացված բետոնախառնիչ հանգույցում, որը ապահովված կլինի չափաբաժին կշռող սարքավորումներով և կապահովի նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով:

1.9 Շինարարության տևողությունը

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմել է՝ 13,5 ամիս ներառյալ աշխատանքերի համատեղման, սեյսմիկայի գործակիցները, ինչպես նաև նախապատրաստական շրջանը 20օր:

Շինարարական պայմանագիրը կնքելիս Կապալառուն պարտավոր է ժամանակին կազմակերպել շինարարության անհրաժեշտ նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսների մատակարարումը, որը կապահովի պայմանագրով նշված շինարարության ժամկետի պահպանումը:

Նախագծվող նախատեսված աշխատանքերը տվյալ ժամանակահատվածում իրականացնելու ընթացքում կապալառուն պետք է խստագույնս պահպանի յուրաքանչյուր աշխատանքի իրականացման համար համապատասխան նորմերի և ԳՈՍՏ-րի բոլոր պահանջները / մատակարարում, պահպանում, տեղադրում, միաձույլ բետոնի և երկաթբետոնի տեղադրման ընթացքում պահպանման

միջոցառումների կիրառումը / $+25^0$ –ից ավել և $+5^0$-ից ցածր ջերմաստիճանի պայմաններում/ , մոնտաժման և ապամոնտաժման ընթացքում տեխնիկային անվտանգության կանոնները և այլն/:

1.10 Աշխատանքային կադրեր

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համաձայն ЕниР-րի նորմատիվային տվյալների:

Բանվորների առավելագույն քանակը, ներառյալ այլ տնտեսությունների (подсобное хозяйство) կկազմի 66x1.3=86մարդ:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

1.11 Աշխատանքների պահպանությունը

Այս բաժնում բերվում են հարցերի այն շրջանը և դրանց կատարումը կապված շինարարական աշխատանքների պահպանության նորմատիվային պահանջների կատարման և հսկողության հետ:

Անվտանգության նորմերը և կանոնները, որոնք տարածվում են է շին-մոնտաժային աշխատանքների վրա, անկախ այդ աշխատանքների գերատեսչական ենթակայությունից, թելադրվում են СНиП III-4-80*:

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների՝ աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով, ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

Տարածված է հավաքովի էլեմենտների առասանման երեք եղանակ՝ էլեմենտի առասանում իր շուրջը (в обхват), կեռիկներից (за петли), անցքերից (за отверстия): Ապամոնտաժվող հավաքովի երկաթբետոնյա էլեմենտների առասանման (строповка) եղանակը առաջարկվում է շրջային (в обхват), հաշվիառնելով այն փաստը, որ հնարավոր է մոտնաժման ժամանակ կեռիկների վնասվածությունը, անցքերի վնասվածությունը:

Առասանման տեղերը պետք է լինեն առասանվող էլեմենտների ծանրության կենտրոնից դուրս:

Առասանի թեքման օպտիմալ անկյունը հորիզոնին կազմում է 45^0: Էլեմենտի քաշից, գաբարիտներից և բեռնաբռնիչ սարքի բեռնունակությունից կախված թույլ է տրվում այդ անկյան ավելացում կամ փոքրացում 15^0 աստիճանով:

30^0 աստիճանից պակաս կամ 60^0 աստիճանից ավել առասանի ճյուղերը տեղակայել թույլ չի տրվում:

Առանց կեռիկների էլեմենտների, որոնց առասանման տեղերը հայտնի չէն, բարձրացման հնարավորության ստուգման համար անհրաժեշտ է իմանալ բեռի քաշը առասանի ճյուղերի թեքության անկյունը հորիզոնին: Այդ դեպքում բեռնաբռնիչ սարքի ճյուղերին բեռնվածությունը (нагрузка) որոշվում է ստորև բերվող աղյուսակի տվյալների:

Առասանիի տիպը	Բարձրացվող բեռի քաշը			
	Մեկ ճյուղով	Երկու ճյուղով առանձին	Երկու միացված ճյուղով	Չորս ճյուղով առանձին
Երկճյուղանի	0,6 Qc	Qc	Qc	-
Չորս ճյուղանի	0.3 Qc	0.5Qc	0.5Qc	Qc

Որտեղ՝ Qc – առասանիի բեռնունակությունը:

Ելնելով աղյուսակից ստացված բեռնվածության տվյալներից, առասանիի ճյուղերի վրա, առանց կեռիկների բեռների վրա նշվում են առասանման տեղերը:

Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջաչման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախազգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներ

Աշխատանքային պայմանների անվտանգության խախտման նախազգուշական միջոցառումները՝ երկաթբետոնյա կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Խաղտման հնարավոր հետևանքները	Խաղտման պատճառը	խաղտման նախազգուշական միջոցառումները
Դարսակի քանդվում, ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3^0 – ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիչների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում, ճոպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկ-ցիայի տեղադրում, վնաս-վածքներ բռնիչ սարքե-րից, կառճատեսության նշաններ	Աշխատանքային գոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային գոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճոպանի լարում	Նախազգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատաս-խանություն նրա օգտա-գործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաննե-րում, քան տրված է անձ-նագրում): Չնախատեսված աշխատանքային շարժում-ների համատեղում	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկ-ցիային մանրակրկիտ ուսումնասիրություն
Էլեկտրական տրավմաներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության	ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում

	գերազանցում	
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Չայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակազրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրաերթ բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում	Աշխատանքների կազմակերպման նախագծով (ԱԿՆ) հաս-տատված տեղաշարժման ուղեգծիծ շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբառձիչ մեխանիզմների ուղեգծի վրա: Ամբարձիչի և կառույցի միչև թույլատրելի հեռավորության գերազանցում	Աշխատանքների իրակա-նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքութ-յան վերացում: Թույլատրե-լի հեռավորության, ոչ պա-կաս քան 1մ, պահպանում
Բանվորի ժամանակից շուտ հոքնաածություն, գլխապտույտ և փսխում	Աշխատանքների իրակա-նացում այն զոնաներում , որտեղ նորմաներից գերա-զանցում են աղմուկը, վիբ-րացիան, գազերի առկա-յությունը, աշխատան-քային զոնայի տեսադաշ-տի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում
Մրսածության հիվանդություններ և ցրտահարում	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ –ից ոչ մոտիկ , ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգագիր - թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնեության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես և առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին, կամ կախվում են տեսանելի տեղում ամբարձիչի մոտակայքում:

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում մինիմալ հեռավորությունը կազմում է 1մ:

Մինիմալ հեռավորությունը ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միչև (между блоком стрелы и крюковой обоймой) պետք է լինի ոչ պակաս քան 0,5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է բարձրացված լինեն 0,5մ-ից բարձր ճանապարհին հանդիպող առականերից:

Թույլ չի տրվում տեղափոխվող էլեմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ:

Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առասանման եղանակները պետք է բացառեն վեռնաշխատանքները (верхолазные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլատվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման զոնան լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի կաբինայից, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5^0:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* <Անվտանգության տեխնիկան շինարարության մեջ>:

1.12 Շրջակա միջավայրի պահպանության

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և մաքսիմալ պահպանվի բնական լանդշաֆտը:

1.13 Սոցիալական նախազգուշական միջոցառումներ շինարարության ընթացքում

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:

Մասնավոր հողերի ժամանակավոր կամ մշտական օ•տա•ործումից խուսափում, իսկ այդպիսի անհրաժեշտության դեպքում՝ պատվիրատուի տեղեկացում:

2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:

3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, և այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո:

4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:

5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:

6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների բնակության հետ կապված սանիտարական միջոցառումների իրականացում:

7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներ·րավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահոված կլինեն ջրով և կոյուղով:

8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:

9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո՝ վերականգնողական աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ էսթետիկ տեսքը:

Թերթ	Անվանումը	Ծանոթություն
1	*2*	*3*
ՇԿՆ-1	Ընդհանուր տվյալներ	
ՇԿՆ-2	Շինարարական գլխավոր հատակագիծ Մ1:1000	
ՇԿՆ-3	Շինարարության իրականացման հերթականություն: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-4	Առաջին հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-5	Երկրորդ հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-6	Երրորդ հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-7	Չորրորդ հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-8	Հինգերորդ հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-9	Վեց և յոթերորդ հերթին իրականացվող աշխատանքեր: Հատակագիծ Մ:1:1000	
ՇԿՆ-10	Հիմքերի փոսորակների բնահողերի մշակման և էքսկավատորի տեղակայման սխեմա: Տիպարային կտրվածք Մ1:100	
ՇԿՆ-11	Հենապատերի և ճանապարհների լիրքի բնահողերի լիցքի հավասարեցման խոնավածման և խտացման սխեմաներ	
ՇԿՆ-12	Ե/բ հեծանի առասանման սխեմաներ	
ՇԿՆ-13	Երկու ավտոկռունկով 28մ/22մ երկարությամբ ե/բ հեծանի մոնտաժման սխեմա: Երկայնական կտրվածք: Հանգույց "Ա"	
ՇԿՆ-14	Ավտոբետոնապոմպի տեղակայման սխեմա:Հավաքովի-քանդովի լաստակների տեղակայման սխեմա	
ՇԿՆ-15	Շինարարության տևողության և բանվոր ուժի շարժման ժամանակացույցեր	

Վկայակոչվող փաստաթղթերի ամփոփագիր

Նշանակում	Անվանումը	Ծանոթություն
ՇՆևԿ 3.01.01-85*	Շինարարության կազմակերպման արտադրություն	
ՇՆևԿ 3.02.01-87	Հողային կառուցվածքներ, հիմնատակեր և հիմքեր	
ՇՆևԿ 3.03.01-87	Կրող, ցանկապատող կառուցվածքներ	
ՇՆևԿ III-4-80* և 12-04-2002	Անվտանգության տեխնիկա շինարարությունում	
СТОНОСТРОЙ 2.29 106-2013	Կամուրջների թռիչքային հավաքովի և հավաքովի-միաձույլ կառույցներ	

Նախագիծը մշակված է գործող նորմաներին և կանոններին համապատասխան:
Նախագծի գլխավոր ճարտարագետ՝ Ա.Հարությունյան

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՍՍԱԹ.	Մ-2 ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-1	15
				Ընդհանուր տվյալներ	«ՍՈՒՖԵՏՍ» ՍՊԸ		

Շինարարական գլխավոր հատակագիծ
Մ:1:1000



Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

Հ/Հ	Անվանում	Քանակը	Չափերը, մ	Ծախսվող էլ. կՎտ	Ծանոթություն
1	2	3	4	5	6
1	Աշխղեկի գրասենյակ	1	8.6x3.1	6.0	Կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7x3.0	6.0	Կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	1	7.25x2.9	7.2	Կոնտեյներային
4	Կիսաածածկ պահեստ	1	10.0x5.0	–	
5	Հանդերձարան	1	6.7x3.0	7.22	Շարժական
6	Բիոզուգարան	1	D1,3	1.0	

Պայմանական նշաններ



—— Նախագծով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների իրականացման սահմանը

1-6 —— Ժամանակավոր տնտեսության շենքեր, շինություններ

Ծանոթություն

1. Շինարարական հրապարակը իր մեջ ներառում է նախատեսվող կամրջի, վերակառուցվող և կառուցվող ճանապարհների, անցկացվող կոմունիկացիաների և նրանց հարող տարածքները:
2. Շինարարական հրապարակը սահմանափակվում է գոյություն ունեցող շենքերով և շինություններով, էլեկտրահաղորդիչ և լուսավորության սյուներով, ստորգետնյա և վերգետնյա կոմունիկացիաներով:
3. Շինարարական հրապարակը տեղակայվում է Մ-2 մայրուղու, Հ-8 , Նորագավիթի 1-ին փողոցի ճանապարհային հանգույցում:
4. Շինարարական աշխատանքները իրականացվելու են բանուկ հատվածում, փողոցային տրանսպորտի աշխատանքի հետ զուգահեռ:
5. Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայումը շինհրապարակի տարածքում հնարավոր չէ, շինհրապարակի շուրջ խիտ կառուցապատման արդյունքում: Կարելի է օգտագործել գոյություն ունեցող կիսաքանդ ավտոտեսչությանը պատկանող քարե շինության և նրան հարող տարածքը, որը սակայն կտեղավորի միայն աշխղեկի գրասենյակը ր բիոզուգարանը:
6. Գծագրում բերված ժամանակավոր շենք երի և շինությունների ցանկը պետք է հասցնել նվազագույնի, հաշնի առնելով , որ շինարարությունը իրականացվելու է Երևան քաղաքի սահմաններում, շատ խիտ կառուցապատված տարածքում, տրանսպորտի աշխատանքի հետ զուգահեռ, իսկ շենքերի և շինությունների տեղակայման համար տարածքը կձշտվի շինարարության ընթացքում:
7. Շինարարական հրապարակը մայթերի եզրագծերի հատվածներում սահմանափակվելու է ժամանակավոր ցանկապատով, որը կահավորված կլինի հովհարով և լուսավորությամբ: Ժամանակավոր ցանկապատի կառուցվածքը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 23407-85 պահանջներին:
8. Շինարարության ընթացքում շինարարական հրապարակի տարածքով անցնող և կից ավտոճանապարհների երթևեկությունը կսահմանափակվի կամ կդադարի, մեքենաները ուղղելով շրջանցող ճանապարհով:
9. Ավտոտրանսպորտի երթևեկության դադարումը, շրջանցումը պետք է իրականացնել ունենալով համաձայնություն համապատասխան տեսչության կողմից և համապատասխան մարմինների ներկայացուցչի ներկայությամբ:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒԻՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀՐԱՎԻՐԵԼ ՏՎՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ

1. ԷԼ. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

2. ԿԱՊԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

3. <ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ > ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
4. <ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ> ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԳԱԶԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՇՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկային կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* ևՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:

ՊԱՏՎԵՐ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԱԳ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաթաջանյան		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-2	15
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023				
				Շինարարական գլխավոր հատակագիծ	SUFET «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		



Պայմանական նշաններ

Աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականությունը

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկային կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* և ՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:

Ծանոթություն

1. Ինչպես նշել ենք, շինարարական հրապարակը տեղակայվում է Մ-2 մայրուղու, Հ-8 , Նորագավիթի 1-ին փողոցի ճանապարհային հանգույցում:
2. Շինարարական աշխատանքները իրականացվելու են բանուկ հատվածում, փողոցային տրանսպորտի աշխատանքի հետ զուգահեռ:
3. Նախագծով նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ամբողջական լրակազմը իրականացնել մեկ ճակատով հնարավոր չէ ավտոտրանսպորտի աշխատանքը չխափանելու նպատակով:
4. Առաջարկում ենք շինմոնտաժային աշխատանքները իրականացնել հետևյալ հերթականությամբ՝
 - առաջին ուղեանց
 - երկրորդ ուղեանց կենտրոնական հենարաններով
 - թռիչքային կառուցվածք
 - նոր կառուցված ճանապարհի աշխատանքներ աջ և ձախ հատվածներով
 - դեպի Արշակունյանց պողոտա՝ աջ և ձախ հատվածներով
 - Մ-2 մայրուղու ձախ հատվածը
 - Մ-2 մայրուղու աջ հատվածը
 - Նորագավիթի ատաջին փողոցի և Հ-8 պողոտայի մնացած հատվածները:
5. Նշված հատվածների հետ զուգահեռ իրականացվում են տվյալ հատվածում ներառված կոմունիկացիաների կառուցումը և վերակառուցումը:
6. Աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականությունը և աշխատանքների իրականացման մոտեցումները հանդիսանում են կողմնորոշիչ կապալառուի համար: Կապալառուն պետք է մշակի շինկազմակերպման իր տարբերակը շինարարության արտադրության նախագծի (ՇՊՐ) սահմաններում , ներկայացնի և հաստատի պատվիրատուի հետ և կիրառի այն:

ՊԱՏՏՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023		
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ ԱՆ	ԹԵՐԹ ՇԿՆ-3	ԹԵՐԹԵՐ 15
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023				
				Շինարարության իրականացման հերթականություն:	SUFET «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		

Հատակագիծ
Մ:1:1000



Պայմանական նշաններ

- Առաջին հերթին իրականացվող աշխատանքների սահման

- Աշխատանքների իրականացման տարածքի սահմանազատում արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներ, ինչպես նաև լուսարձակային վահանակներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժման ուղղությունները

Ծանոթություն

1. Ինչպես նշել ենք, շինարարական հրապարակը տեղակայվում է Մ-2 մայրուղու, Ձ-8 , Նորագավիթի 1-ին փողոցի ճանապարհային հանգույցում:
2. Շինարարական աշխատանքները իրականացվելու են բանուկ հատվածում, փողոցային տրանսպորտի աշխատանքի հետ զուգահեռ:
3. Ըստ աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականության առաջնային իրականացվում է առաջին ուղեանցի կառուցման աշխատանքները:
4. Շինմոնտաժային աշխատանքների տարածքը սահմանափակվում է արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներով, ինչպես նաև լուսարձակային վահանակներով և լուսավորությամբ:
5. Ավտոտրանսպորտի տեղաշարժը իրականացվում է ուղեանցը շրջանցող ճանապարհներով:
6. Շրջանցող ճանապարհներով ավտոտրանսպորտի տեղաշարժի նոր ուղղությունները պետք է համաձայնեցնեն տրանսպորտի միևիստրության համապատասխան մարմինների հետ, պարեկային ծառայությունների անմիջական աշխատանքի օգնությամբ:

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկային կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* ևՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:

ՊԱՀԵՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-4	15
				Առաջին հերթին իրականացվող աշխատանքեր	«ՍՈՒՖԵՏՍ» ՍՊԸ		

Հատակագիծ
Մ:1:1000



Պայմանական նշաններ

- Երկրորդ հերթին իրականացվող աշխատանքների սահման

- Աշխատանքների իրականացման տարածքի սահմանազատում արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներ, ինչպես նաև լուսարձակային վահանակներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժման ուղղությունները

Ծանոթություն

1. Ըստ աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականության երկրորդ հերթին իրականացվում է երկրորդ ուղեանցի և կենտրոնական հենարանների կառուցման աշխատանքները:
2. Շինմոնտաժային աշխատանքների տարածքը սահմանափակվում է արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներով, ինչպես նաև լուսարձակային վահանակներով և լուսավորությամբ:
3. Ավտոտրանսպորտի տեղաշարժը իրականացվում է ուղեանցը շրջանցող ճանապարհներով:
4. Երկրորդ ուղեանցի կառուցման ընթացքում շինհրապարակի տարածքում գտնվող Հ-8 ճանապարհով տրանսպորտի տեղաշարժը սահմանափակվում է:
5. Դեպի Հ-8 ճանապարհ կարելի է մուտք գործել շրջանցող գրունտային ճանապարհներով Մ-2 մայրուղուց Unimine ֆիրմայից դեպի Իննեսա սուպերմարկետ տանող գրունտային ճանապարհով:
6. Շրջանցող ճանապարհներով ավտոտրանսպորտի տեղաշարժի նոր ուղղությունները պետք է համաձայնեցնեն տրանսպորտի միևիստրության համապատասխան մարմինների հետ, պարեկային ծառայությունների անմիջական աշխատանքի օգնությամբ:

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկական կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* ևՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարապետի ներկայությամբ:

ՊԱՏՐԱՍՏՈՒՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.
ՆԱԽԱԳԾԵՑ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023

Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Շինարարության կազմակերպման նախագիծ

ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ԱՆ	ՇԿՆ-5	15

Երկրորդ հերթին իրականացվող աշխատանքեր

«ՍՈՒՖԵՏՍ» ՍՊԸ

Գլխ. նախագիծ	Ա. Հովհաննիսյան				
Նախագ.	Ա. Հովհաննիսյան	25.10.2023			
Ստուգ.	Ա. Հովհաննիսյան	25.10.2023			
Նկարագրություն կազմվածքի նախագիծ			ՓՈՒԼ	ՔԱՌԱ	ՔԱՌԱԸՆԴ
Էքսպլուատացիոն հրահանգ			ԱՆ	ՇԴՎ-6	15
Ընդհանուր տվյալներ և աշխատանքների կատարման կարգ					

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ

SUFET

Ս-2 ՀՈՍԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ Ա-Ա, Ն ՊՈՂՈՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳԾԱՊԼԱՆ

Գլխ. նախագ.	Ա. Հովհաննիսյան	25.10.2023		
Նախագ.	Ա. Հովհաննիսյան	25.10.2023		
Ստուգ.	Ա. Հովհաննիսյան	25.10.2023		

Ժամանակացույց


ՀՈՍ Ա ՀԱՄԱՐՁԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ
ՃՏՊՍՓ ՂՀ-1 ՀՓՀԻՈԵՈՆՅՈՂ
Ս-2
Ա-Ա
Ա-Ա
Ա-Ա

Պատվիրատու	Անուն, ազգանուն	Ստորագր.	Ամսաթիվ	ՀՀ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱԿԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ «ՀՐԴԵՀԱԿԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» ՊՈԱԿ		
ՆԱԳ	Ա. ՀԱՄԱՅԱԿՅԱՆ	25.10.2023				
ՏՆՏԳԱԾԲ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ	25.10.2023				
ՆԱԽԱԳԾԲ	Հ. ԳԱՐԱԳԱՆՅԱՆ	25.10.2023				
ՆԱԳ	Ա. ՀԱՄԱՅԱԿՅԱՆ	25.10.2023		Ս-2 ՄԱՐԶԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՀԻ ԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾ ՀՐԴԵՀԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈՒՆԱՎԱՐ ԲԵՏՈՆԱՊԱՏ ՀՈՒՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ		
ՆԱԽԱԳԾԲ	Հ. ԳԱՐԱԳԱՆՅԱՆ	25.10.2023		Շինարարության ժամանակավոր կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԱԾ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ	25.10.2023			ՍՆ	ԷՋ-7	15
				Շրջապատի բերքի լիովին վերականգնում			

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ

Ընդհանուր տվյալներ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը նախատեսվում է ՀՀ կառավարության 12.04.2002 թվականի N 429-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնները և պարտադիր պահանջները» կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը նախատեսվում է ՀՀ կառավարության 12.04.2002 թվականի N 429-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնները և պարտադիր պահանջները» կանոնակարգի պահանջներին համապատասխան:

- Շինարարական տարածքի սահմանազատիչ ցանկապատ
- Շրջապատի բերքի լիովին վերականգնում



Շահագործման ընթացքում ճանապարհային երթևեկության կազմակերպումը նախատեսվում է ՀՀ կառավարության 12.04.2002 թվականի N 429-Ն որոշմամբ հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնները և պարտադիր պահանջները» կանոնակարգի պահանջներին համապատասխան:

- Շինարարական տարածքի սահմանազատիչ ցանկապատ
- Շրջապատի բերքի լիովին վերականգնում

Ընդհանուր դրույթներ

1. Նախ շինարարական տարածքի սահմանազատիչ ցանկապատի տեղադրումը:
2. Շինհրապարակի շինարարական տարածքի սահմանազատիչ ցանկապատի տեղադրումը:
3. Նոր կառուցված ճանապարհների վրա ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո ճանապարհային նշանների տեղադրումը:
4. Ճանապարհային նշանների տեղադրումը նոր ասֆալտապատ ճանապարհների վրա կատարել միայն ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո:

Հատակագիծ
Մ:1:1000



Պայմանական նշաններ

- Հինգերորդ հերթին իրականացվող աշխատանքների սահմանները

- Աշխատանքների իրականացման տարածքի սահմանազատում արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներ, ինչպես նաև լուսարձակային վահանակներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժման ուղղությունները

Ծանոթություն

1. Ըստ աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականության հինգերորդ հերթին իրականացվում է դեպի Արշակունյանց պողոտա գնացող ճանապարհի վերանորոգման աշխատանքները:
2. Շինմոնտաժային աշխատանքների տարածքը սահմանափակվում է արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներով, ինչպես նաև լուսարձակային վահանակներով և լուսավորությամբ:
3. Աշխատանքները առաջարկվում է իրականացնել երկու փուլով՝ սահմանափակել ճանապարհի աջ հատվածը, իրականացնել նախագծով նախատեսված շինարարական աշխատանքները, որի ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժը կիրականացվի ձախ հատվածով, ապա կսահմանափակվի ձախ հատվածը, իրականավեն նախագծով նախատեսված շինարարական աշխատանքները, որի ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժը կիրականացվի աջ հատվածով :
4. Ճանապարհներով ավտոտրանսպորտի տեղաշարժի նոր ուղղությունները պետք է համաձայնեցնեն տրանսպորտի մինիստրության համապատասխան մարմինների հետ, պարեկային ծառայությունների անմիջական աշխատանքի օգնությամբ:

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկական կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* և ԱՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:

ՊԱՀԵՍՏՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՍՍԱՁ.	Մ-2 ՄԻԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳՁ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023				
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-8	15
				Հինգերորդ հերթին իրականացվող աշխատանքեր	SUFET «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		

Հատակագիծ
Մ:1:1000



Պայմանական նշաններ

- Վեցերորդ և յոթերորդ հերթին իրականացվող աշխատանքների սահմանները

- Աշխատանքների իրականացման տարածքի սահմանազատում արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներ, ինչպես նաև լուսարձակային վահանակներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժման ուղղությունները

Ծանոթություն

1. Ըստ աշխատանքների իրականացման առաջարկվող հերթականության վեց և յոթերորդ հերթին իրականացվում է Մ-2 մայրուղու վերանորոգման աշխատանքները:
2. Շինմոնտաժային աշխատանքների տարածքը սահմանափակվում է արգելափակիչ, տրանսպորտի արագությունը սահմանազատող ազդանշանային վահանակներով, ինչպես նաև լուսարձակային վահանակներով և լուսավորությամբ:
3. Աշխատանքները առաջարկվում է իրականացնել երկու փուլով՝ սահմանափակել ճանապարհի պայմանական 6-րդ հատվածը, իրականացնել նախագծով նախատեսված շինարարական աշխատանքները, որի ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժը կիրականացվի պայմանական 7-րդ հատվածով, ապա կսահմանափակվի պայմանական 7-րդ հատվածը, իրականացվեն նախագծով նախատեսված շինարարական աշխատանքները, որի ընթացքում ավտոտրանսպորտի տեղաշարժը կիրականացվի պայմանական 6-րդ հատվածով հատվածով :
4. Ճանապարհներով , ինչպես նաև շրջանցող ճանապարհներով, ավտոտրանսպորտի տեղաշարժի նոր ուղղությունները պետք է համաձայնեցնեն տրանսպորտի մինիստրության համապատասխան մարմինների հետ, պարեկային ծառայությունների անմիջական աշխատանքի օգնությամբ:
5. Պայմանական 8-րդ հատվածների նախագծով նախատեսված շինարարական աշխատանքները առաջարկվում է իրականացնել զուգահեռ, որևէ այլ նամապատասխան հատվածի հետ ըստ կապալառուի հայացողության:

Բոլոր շինմոնտաժային աշխատանքները պետք է իրականացվեն խստորեն պահպանելով անվտանգության տեխնիկային կանոնները համաձայն ՍՆիՊ III-4-80* և ՍՆիՊ 12-04-2002 մաս 2-ի պահանջների: Շինմոնտաժային աշխատանքերը պետք է իրականացվեն միայն անվտանգության տեխնիկայի ճարտարագետի ներկայությամբ:

ՊԱՀԵՏՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՍՍԱՁ.	Մ-2 ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023				
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.ԲԱԲԱՋԱՅԱՆ		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-9	15
				Վեց և յոթերորդ հերթին իրականացվող աշխատանքեր	«ՍՈՒՖԵՏՆ» ՍՊԸ		

Հենապատերի հիմքերի փոսորակների բնահողերի մշակման սխեմա
Էքսկավատորի և ավտոինքնաթափի տեղակայման սխեմա
Լայնական կտրվածք Մ1:100



Ծանոթագրություն:

1. Հենապատերի հիմքերի, ճանապարհների հանույթի, խրամուղիների և փոսորակների հանույթների բնահողերի մշակումը առաջարկվում է իրականացնել էքսկավատոր-հակադարձ շերեփով, շերեփի տարողությունը ընդունելով 0.65մ3:
2. Բնահողերի մշակումը իրականացվելու է հիմնականում բարձումով ինքնաթափ, կան կառույցներ, որտեղ բնահողերի մշակումը իրականացվում է կողլիցքով, հետագա օգտագործումով հետլիցքի համար:
3. Բնահողերի տեղափոխման համար օգտագործվում է ավտոինքնաթափ 12-16տ բեռնունակությամբ:
4. Հենապատների փոսորակների բնահողերի մշակումը առաջարկվում է իրականացնել ընդունելով էքսկավատորի փորման շառավիղը 5մ-6մ ըստ հատակի լայնության:
5. Տեխնիկական անվտանգությունից ելնելով շինարարական մեքենաների մոտակա հենարաններից (անիվներից) մինչև փոսորակի շեպի հիմքը հեռավորությունը ընդունել ըստ ՇՆևԿ III-4-80* պահանջների:
6. Հենապատերի փոսորակների խորհությունը ըստ նախագծի տատանվում է 0.5մ-2.8մ սահմաններում, ճանապարհների հանույթների խորհությունը 0.2մ-1.5մ սահմաններում: Փորման խորհությունից ելնելով բնահողերի մշակումը կիրականացվի մասամբ բուլդոզերով կուտակումով էքսկավատորի շերեփին կից, իսկ հիմնական մասը էքսկավատորով բարձումով, կամ կողլիցքով, իսկ թերահավաքումը (հենարանների փոսորակներում) ,առավելագույնը 15սմ հաստությամբ, ձեռքով, կամ մոբիլ բուլդոզերով կուտակումով և էքսկավատորով բարձումով:

Նախագծով նախատեսված հանույթների շեպերի սահմաններում շինարարական մեքենաների և մեխանիզմների տեղակայումը պետք է իրականացվի խստապես պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները, տեղակայելով մեքենաները և մեխանիզմները շեպերի բնահողերի փլուզման սահմաններից դուրս, համաձայն ՄՆիՊ III-.4-80* պահանջների

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-10	15
				Հիմքերի փոսորակների բնահողերի մշակման և էքսկավատորի տեղակայման սխեմա: Տիպարային կտրվածք	«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		

Լիրքի բնահողի լիցքի սխեմա



Լիրքի լիցքի հավասարեցման քարտի սխեմա



Լիրքի լիցքի խոնավացման քարտի սխեմա



Լիրքի լիցքի խտացման սխեմա



Ծանոթագրություն՝

1. Լիրքի իրականացման համար տվյալ նիշի մակերևույթը բաժանվում է քարտերի ըստ աշխատանքների հերթականության:
2. Տոփանման մեխանիզմները ընտրվում են ելնելով գրունտի տեսակից և տոփանման մակերևույթի չափերից:
3. Հիմնականում ընդունված են հետևյալ տոփանման մեխանիզմներ՝ 25տ պնեվմոդողային գլդոն, կամ թրթռագլդոն 10տ
4. Նեղ հատվածներում տոփանումը կատրվում է 5տ բռնցքավոր գլդոնով, կամ ընկնող սալերով:
5. Շատ նեղ պայմաններում մինչև 2մ լայնությամբ տոփանումը իրականացվում է ձեռքի տոփանման մեխանիզմով TH-1, U-157:

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-11	15
				Հենապատերի և ճանապարհների լիրքի բնահողերի լիցքի, հավասարեցման, խոնավացման և խտացման սխեմաներ	SUFET «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		

Ե/բ հեծանի լայնակով առասանման սխեմա



Ե/բ հեծանի առանց լայնակի առասանման սխեմա







Երկու ինքնագնած ամբարձիչով հեծանի մոնտաժման սխեմա



ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	ՄՀ-2 ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, ՀՀ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳՁ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-12	15
				Ե/բ հեծանի առասանման սխեմաներ	«ՍՈՒՖԵՏՍ» ՍՊԸ		

Երկու ավտոկռունկով 28մ/22մ երկարությամբ
ե/բ հեծանի մոնտաժման սխեմա





Հատուկ շասսիով ավտոկռունկի / КС-6471/
պահանջվող տեխնիկական բնութագիրը՝
- սլաքի երկարությունը-15մ
- բեռնունակությունը մեկ կեռիկի վրա
-18տ/14տ
- կեռիկի բարձրությունը -9մ
- սլաքի առավելագույն թռիչքը -6.5մ

Տվյալ գծագիրը նայել ՇԿՆ-6 գծ հետ:

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-13	15
				Երկու ավտոկռունկով 28մ/22մ երկարությամբ ե/բ հեծանի մոնտաժման սխեմա: Երկայնական կտրվածք: Հանգույց "Ա"	«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ		

Ավտոբետոնապոմպի տեղակայման սխեմա նախատեսվող ուղեանցների հենապատերի կառուցման ընթացքում





Ծանոթագրություն:

Հավաքովի քանդովի խողովակային ինվենտար լաստակների տեղադրումը նախատեսվում է իրականացնել կառուցվող հենապատերի արտաքին մակերեսով մինչև 8մ բարձրությամբ: Հավաքովի քանդովի խողովակային ինվենտար լաստակները պետք է ժամանակավոր ամրացվեն հենապատին: Ամրացման նիշերը և քանակը կճշտվեն շինարարության ընթացքում:

Հավաքովի քանդովի խողովակային ինվենտար լաստակների տեղադրումը և չափերը պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 24258-88 և 27321-87 պահանջներին:

Հավաքովի քանդովի խողովակային ինվենտար լաստակները կիրառվում են նաև այլ աշխատանքների համար հատակից 1.5մ-ից բարձր բարձրության վրա: Դերաղասելի է օգտագործել խողովակային ինվենտար լաստակներ:

Արտաքին կողմից հավաքովի քանդովի խողովակային ինվենտար լաստակները ամրմանափակվում են պաշտպանիչ ցանցով: Պաշտպանիչ ցանցը տեղակայվում է լաստակների արտաքին մակերևույթին 8.0մ նիշից մինչև հատակը: Պաշտպանիչ ցանցի տեղակայումը կապահովի հենապատերի կառուցման և կահավորման ընթացքում բանվորների և այլ աշխատող անձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից:

Ծանոթագրություն:
1. Նախագծով նախատեսված ուղեանցի հենապատերի բետոնի մատուցման համար առաջարկվում է օգտագործել ավտոբետոնապոմպ մինչև 10մ3/ժամ արտադրողականությամբ:
2. Բետոնապոմպի տեղակայումը ատաջարկվում է իրականացնել կառուցվող հենապատերի միջև ընկած տարածքում:
3 Բետոնի մատուցման առավելագույն շառավիղը կազմում է 11.2մ, նվազագույնը 5.4մ:

ՊԱՇՏՈՆ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	Մ-2 ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԳԾ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023			
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաբաջանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱԿՈԲՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՆ-14	15
				Ավտոբետոնապոմպի տեղակայման սխեմա: Հավաքովի-քանդովի լաստակների տեղակայման սխեմա	«ՍՈՒՖԵՏՍ» ՍՊԸ		

Շինարարության տևողության օրացուցային ժամանակացույց

№ հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Ծա-վալը	Անվա-նումը	Քանա կը	հիմնա-վորում	արտադրո-ղականութ-յունը հերթա-փոխում	Հեր-թա-փոխի քանակ ը	Տևողութ-յունը, օր	Տևողութ-յունը, ամիս	Բանվոր-ների քանակութ յունը հերթա-փոխում	Ամիսներ													
												1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	Նախապատրաստական շրջան, ներառյալ ժամանակավոր անտեսության տեղակայում, ժամանակավոր ցանկապատի տեղադրում,								20	0.8	6														
2	Ժամանակավոր արգելափակիչ և զգուշացնող նշանների տեղադրում						կիրառելի		20	0.8	4														
3	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում և տեղափոխում թափոնավայր	մ3	2685.16	էքսկավատոր	1	ԾՆԱԿ 27	87.2	1	30.80	1.23	4														
4	Ա/բ ծածկի ֆրեզում հսիջ = 5սմ, WIRTGEN տիպի ֆրեզով	մ2	4646.83	բանվոր, ինքնագնաց ֆրեզա, ինքնաթափ	1	ԵՇՀ 27-03-011-1	144.1	1	32.24	1.29	6														
5	Փոսիկ ֆեռմերների քանդում էքսկավատորով կողլիգքով, կամ բարձումով	մ3	9669.0	էքսկավատոր	2	E2-1-11, աղյուսակ 2-5-վ	285.7	1	16.92	0.68	1														
6	Փոսիկ ֆեռմերների քանդում ձեռքով կողլիգքով	մ3	120.0	բանվոր	1	E2-1-31, աղյուսակ 3-2-ժ	4.0	1	30.00	1.20	1														
7	Նախապատրաստական շերտի ստեղծում ավազով, տափանումով	մ3	98.0	բանվոր, տափիչ	1	E2-1-44, աղյուսակ 1-2-բ	18.2	1	5.39	0.22	2														
8	Հեղուկքի իրականացում ձեռքով օգտակար հանույթի վրափակ բեռնաթերով, տափանումով	մ3	120.00	բանվոր, տափիչ	1	E2-1-44, աղյուսակ 1-2-բ	18.2	1	6.60	0.26	2														
9	Հեղուկքի օգտակար հանույթի բեռնաթերով մեխանիզմով, տափանումով	մ3	2235.90	բուլդոզեր , գլդոն	1	E2-1-21, աղյուսակ 2-4-բ	1038.96	1	2.15	0.0861	2														
10	Հանույսրահի լիքրի ստեղծում բերովի բեռնաթերով	մ3	7327.23	բուլդոզեր ,	1	E2-1-20, աղյուսակ 2-3-վ	727.27	1	10.07	0.4030	2														
11	Հանույսրահի լիքրի խտացում	մ3	7327.23	գլդոն	1	E2-1-22, աղյուսակ 3, 3-ա	2352.94	1	3.11	0.1246	2														
12	Ասֆալտբետոնե ծածկի վերականգնում / նախապատրաստական շերտ, խոշորահատիկ, մանրահատիկ/	մ2	80367.1	բանվոր, գլդոն, սուֆլատատեղայ ին	1	E20-2-21, 1-6	1944.44	1.00	41.33	1.6533	6														
13	Միաձույլ բետոնի, ե/բետոնի տեղադրում	մ3	3190.60	բանվոր, բետոնագործ	1	E4-4-18	12.0	1	265.88	10.64	8														
14	Հավաքովի ավտոճանապարհային, հախսապրված հեծան, L=22մ, տեղադրում	հատ	6.00	մոնտաժնիկ, բանվոր	1	E4-4-38 աղյուսակ 2 3բ	1.5	1	4.05	0.16	6														
15	Հավաքովի ավտոճանապարհային, հախսապրված հեծան, L=28մ, տեղադրում	հատ	6.00	մոնտաժնիկ, բանվոր	1	E4-4-38 աղյուսակ 2 4բ	1.8	1	3.30	0.13	6														
16	Սայթեր, թեքահարթակ						կիրառելի		90.00	3.60	6														
17	Հանույսրահային նշաններ, մոնտաժի գծանշում 368մ2						կիրառելի		25.00	1.00	4														
18	Վերելակի իրականացում						կիրառելի		25.00	1.00	8														
19	Գազատար 145մ						կիրառելի		8.00	0.32	4														
20	Արտաքին լուսավորություն						կիրառելի		50.00	2.00	6														
21	Այլ աշխատանքներ - քանդման, ապամոնտաժման աշխատանքեր, հիմնական աշխատանքներին ուղեկցող մնացած աշխատանքների իրականացում			բանվոր			կիրառելի		100	4	4														
22	Շինուղի մաքրում և հեռացում,			բանվոր			կիրառելի		10	0.4	4														

Բանվոր ուժի շարժման ժամանակացույց



Ծանոթություն:
1. Շինարարության տևողությունը որոշվել է համաձայն գործող շինարարական նորմատիվների և ԵհԱՐ -ների նորմատիվային տվյալների հիման վրա:

Աշխատուժի քանակը կազմում է
66x1.3=86մարդ, որից ԻՏԱ-9հոգի,
ծառայող-10հոգի, պահակ-1հոգի:

ՊԱՏՎԻՐ.	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՍՏՈՐԱԳՐ.	ԱՄՍԱԹ.	ՄՀ-2 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ, Հ-8, ՆՈՐԱԳԱՎԻԹԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ			
ՆԱԳ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		25.10.2023				
ՆԱԽԱԳԾԵՑ	Հ.Բաթաչանյան		25.10.2023	Շինարարության կազմակերպման նախագիծ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՍՏՈՒԳԵՑ	Տ. ՀԱՎՈՐՅԱՆ		25.10.2023		ԱՆ	ՇԿՂ.-15	15
				Շինարարության տևողության և բանվոր ուժի շարժման ժամանակացույցեր	SUFET «ՍՈՒՖԵԵՏ» ՍՊԸ		